ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 սեպտեմբերի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

112
(3321)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 27-ին Կոտայքի մարզի Արզնի համայնքում եւս ՏԻՄ ընտրություններ են սպասվում: Այս ընտրությունը հատկապես ուշագրավ է, քանի որ Արզնիում ընտրությունը չի անցկացվելու համամասնական կարգով. համայնքը, ունենալով 4000-ից պակաս ընտրող, մասնակցում է մեծամասնական ընտրակարգով, իսկ ավագանին կազմված է լինելու 9 անդամից: Այս տարվա նախնական տվյալներով՝ Արզնիում ընտրելու իրավունք ունի 2344 քաղաքացի:

Հիշեցնենք, որ Արզնիի ղեկավարը Ֆելիքս Միրզոեւն է:

Միրզոեւը համայնքի ղեկավար դարձավ 2023 թվականի ընտրությունների արդյունքում: Այդ ընտրություններում նա ստացել էր 372 ձայն՝ առաջ անցնելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջադրած Ալեքսանդր Միրզոեւից, որը ստացել էր 292 ձայն: Մյուս թեկնածուներից Վարդան Ավագյանը ստացել էր 236, Էմիլ Իվանովը՝ 113, իսկ Կորյուն Չոբանյանը՝ 103 ձայն: Ընտրողների ընդհանուր թիվը այդ ժամանակ 2132 էր, մասնակցությունը՝ 1164:

Այս թվերն Արզնիի քաղաքական իրականության մասին շատ բան են ասում. ՔՊ-ի թեկնածուի առկայությունը դեռեւս չի նշանակում, որ համայնքում իշխանության թեկնածուն ինքնաբերաբար հաղթելու է:

2023 թվականի ընտրություններում իշխանական կուսակցությունը բացահայտ մտել էր պայքարի մեջ. ՔՊ-ն համայնքի ղեկավարի թեկնածու էր առաջադրել Ալեքսանդր Միրզոեւին: Սակայն հաղթեց ինքնառաջադրված Ֆելիքս Միրզոեւը: Սա կարեւոր նախադեպ է նաեւ 2026 թվականի ընտրությունների համար:

Որքան էլ Արզնին փոքր համայնք է, այստեղ ընտրությունների արդյունքը կարող է ցույց տալ՝ ՔՊ-ն որքանով է կարողանում իր քաղաքական ազդեցությունը տարածել ոչ միայն խոշոր քաղաքներում, այլեւ փոքր, տեղային քաղաքական համակարգերում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ոստիկանության զորքերի նախկին հրամանատար, ոստիկանության պետի նախկին տեղակալ Գրիգոր Գրիգորյանը՝ «Շերիֆը», Հակակոռուպցիոն կոմիտեում, տեղեկանալով իրեն առաջադրված մեղադրանքի մասին, հայտարարել է, որ այն չի ընդունում եւ ասելիք չունի: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ չի բացառվում, որ Մարտի 1-ի գործով այսօր մեղադրյալի կարգավիճակում հայտնված մի շարք նախկին պաշտոնյաների գործերն այդպես էլ դատարան չհասնեն: Հնարավոր է՝ մեղադրյալները համաձայնեն վաղեմության ժամկետի կիրառմանը, եւ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի: Նկատենք, որ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելը ոչ արդարացնող հիմք է. անձը համաձայնում է գործի դադարեցմանը, սակայն անմեղ չի ճանաչվում: Հիշեցնենք՝ 2026 թվականի սեպտեմբերի 4-ին դատախազի որոշմամբ Գրիգոր Գրիգորյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի համար, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել եւ հանրությանը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնատար անձանց ունեցվածքը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գեւորգ Քոչարյանի հայտարարագիրը: Գեւորգ Քոչարյանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնում նշանակվել է 2025 թվականի մարտի 17-ին ՀՀ վարչապետի որոշմամբ: Մինչ նախարարի տեղակալի պաշտոնը զբաղեցնելը՝ 2020-2025 թվականներին Քոչարյանը եղել է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության ավագ դատախազ: 2019-2020 թվականներին աշխատել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես դատախազ, իսկ 2016-2019 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատահաշվապահական եւ տնտեսագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ: Ինչ վերաբերում է ունեցվածքին, ապա 2025 թվականի սկզբում Գեւորգ Քոչարյանի հայտարարագրում առկա են եղել հողամաս եւ բնակարան Երեւանում՝ համատեղ սեփականության իրավունքով: Սակայն տարվա ընթացքում բնակարանը վաճառվել է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Մայիսի 17-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երեւանում՝ Դավիթ Անհաղթի եւ Ուլնեցու փողոցների հատման հատվածում, տեղի ունեցած խոշոր ավտովթարի հետեւանքով հինգ անձ ճանաչվել է տուժող: Վթարին մասնակցել են «Mercedes-Maybach» եւ «Hongqi» մակնիշի ավտոմեքենաները, որի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Դեպքից հետո ինֆորմացիայի սկզբնաղբյուր shamshyan.com-ը տեղեկություն հրապարակեց, որ պարեկներն ու քննչական բաժինը ունեն կասկածներ, որ «Mercedes Maybach»-ի վարորդը եղել է այլ անձ, սակայն վարորդ ներկայացել է Արմեն Գ.-ն: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ «Մերսեդես-Մայբախ»-ը պատկանում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանին, որը վթարի պահին գտնվել է մեքենայում, իսկ մեքենան, ըստ շրջանառվող տեղեկությունների, վարել է նրա հետ գտնվող կինը: Դեպքից շուրջ երեք ամիս անց «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական հարցմամբ դիմել է Քննչական կոմիտե՝ պարզելու, թե ինչ է հաջողվել պարզել քննությամբ, մասնավորապես՝ ով է իրականում գտնվել մեքենայի ղեկին: Քննչական կոմիտեից մեզ հայտնել են, որ իրականացվում է պատշաճ եւ համակողմանի նախաքննություն:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՀԱՂԹՈՂ ՄԱՐԴԸ ՆՄԱՆ ԿԵՐՊ ՉԻ ՊԱՀՈՒՄ ԻՐԵՆ»

ArmLur.am-ը զրուցել է «Ուժեղ Հայաստան» խմբակցության պատգամավոր Ռուբեն Մխիթարյանի հետ:

- Պարո՛ն Մխիթարյան, Դուք այստեղ եք, «Ուժեղ Հայաստանը» այստեղ է: Ինչո՞ւ որոշեցիք Ձեր աջակցությունը հայտնել Գագիկ Ծառուկյանին:

- Իրականում այստեղ առաջնային հարցը անձը չէ: Մեզ համար առաջնային եւ կարեւորագույն խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում գործի օրենքը, իրավապահ համակարգը գործի օրենքի շրջանակներում, եւ ինչպես մինչ օրս է գործում մեկ անձի հրահանգով, այդպես այլեւս չլինի: Որեւէ ժողովրդավարական եւ օրինական երկրում նմանատիպ բաներ չպետք է տեղի ունենան: Մենք դեմ ենք ցանկացած ոչ օրինական գործողության եւ բարձրացնում ենք մեր բողոքի ձայնը: Այսօր, ցավոք, Նիկոլ Փաշինյանի կողմից չի իրականացվում այն գործողությունը, որը նրա իրավասությունների շրջանակում է: Քաղաքական դրդապատճառներով մարդկանց կալանավորելը, կալանքը որպես պատիժ դիտարկելը որեւէ կերպ չի կարող խրախուսվել մեր կողմից, հատկապես այն պարագայում, երբ մենք ինքներս ունենք նման իրավիճակի անձնական փորձ՝ի դեմս Սամվել Կարապետյանի:

- Վերջին շրջանում կալանավորումները շարունակվում են, իսկ ընդդիմադիրները դրանք որակում են որպես քաղաքական հետապնդումներ: Ինչպե՞ս եք գնահատում այս գործընթացը: Տեսանք նաեւ Ռոբերտ Քոչարյանի, Գագիկ Խաչատրյանի եւ Հանրապետական կուսակցության մի շարք ներկայացուցիչների կալանավորումները: Սա ինչի՞ մասին է խոսում:

- Եթե փորձեմ շատ հակիրճ պատասխանել, սա խոսում է Նիկոլ Փաշինյանի փոքրոգության մասին: Սա խոսում է այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը գիտի՝ինքը չի հաղթել այս ընտրություններում, այլ ընդամենը ընտրակեղծիքների եւ վարչական ռեսուրսի լայն կիրառման միջոցով է հասել իր արդյունքին: Ամենակարեւորն այն է, որ այդքան ապօրինություններից հետո նա չունի ժողովրդի 50 տոկոս գումարած մեկ ձայնի վստահությունը: Հաղթող մարդը նման կերպ չի պահում իրեն: Եթե դու հաղթել ես, պետք է քեզ վստահ եւ հպարտ պահես: Հաղթող անձը նման աստիճանի փոքրոգություններ չի անում եւ նմանատիպ ապօրինությունների չի գնում: Ցավոք, վերջին տարիներին մենք տեսնում ենք Նիկոլ Փաշինյանի իրական դեմքն ու տեսակը: Իսկ ամենավատն այն է, որ այս ամենից տուժում է հայ ժողովուրդը:

- Գագիկ Խաչատրյանի կալանավորմանն անդրադառնալով՝ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ դա «հուսադրող է»: Ի՞նչն է այստեղ հուսադրող: Արդարադատությո՞ւնն է հաղթում:

- Իմ կարծիքով՝ երբ նա ասում է՝ «հուսադրող է», նկատի ունի այն, որ այլեւս չկա որեւէ մեկը, ով իր ածը չի անում: Ես Ազգային ժողովի ամբիոնից բազմիցս խոսել եմ այն մասին, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝մենք ունենք երեք իշխանություններ, որոնք մեկը մյուսից տարանջատված են՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններ: Ես չեմ ցանկանում անդրադառնալ Գագիկ Խաչատրյանի առողջական վիճակին, քանի որ դրան լիարժեք ծանոթ չեմ: Կարող ենք խոսել միայն այն մասին, ինչ տեսել ենք: Իսկ այն, ինչ տեսանք, որեւէ մարդասիրության եւ մարդու իրավունքների պաշտպանության հետ, իմ կարծիքով, որեւէ աղերս չունի: Նման պայմաններում մարդուն կալանքի տանել, նման պայմաններում դատարան տեղափոխել՝ նորմալ չէ: Սա եւս մեկ անգամ խոսում է այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը թույլ մարդ է եւ կարողանում է իր հրամաններն ու հանձնարարությունները տալ՝ իրավապահ մարմինների, ոստիկանության եւ ԱԱԾ-ի հետեւում թաքնվելով: Ես վստահ եմ, որ շատ մոտ ժամանակներում ինքը պատասխան է տալու այս ամենի համար, բայց, իհարկե, այնպես, ինչպես նախատեսված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ համապատասխան օրենքներով:

- Վերջում անդրադառնանք նաեւ Պուտին-Փաշինյան հանդիպմանը: Ի՞նչ ակնկալիքներ ունեք: Արդյո՞ք առաջիկայում ռուս-հայկական հարաբերություններում էական փոփոխություններ կլինեն:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանն է, որեւէ լավ բան սպասելը, ուղղակի, ծիծաղելի է: Չեմ հավատում, որ նմանատիպ փոփոխություն կլինի կամ Նիկոլ Փաշինյանը այնպիսի գործողություն կանի, որը բխում է Հայաստանի Հանրապետության շահերից: Այն, ինչ տեսանք, բավական պարզ ազդակներ էր տալիս: Առաջնայինը պետք է լինի հասկանալ՝մենք ինչ ենք ուզում եւ ինչ դիրքորոշում ունենք: Նիկոլ Փաշինյանի մարմնի լեզուն, նստելու ձեւը եւ ընդհանուր կեցվածքը արդեն հստակ ցույց տվեցին, թե մենք ինչ դիրքում ենք գտնվում: Անկախ ամեն ինչից՝ ես ցավում եմ, որ իմ երկրի վարչապետը Նիկոլ Փաշինյանն է եւ նման կեցվածքով է ներկայացնում Հայաստանը միջազգային հարթակներում:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ՀՀ ԱԺ նախագահ Ռուբեն Ռուբինյանը սեպտեմբերի 7-ին ընդունել է ՀՀ-ում Շվեյցարիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրեա Բարբարա Բաումանին: Դեսպանը շնորհավորել է Ռուբեն Ռուբինյանին ՀՀ Ազգային ժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու առթիվ՝ մաղթելով հաջողություններ:

Հանդիպման ընթացքում կարեւորվել են Հայաստանի եւ Շվեյցարիայի միջեւ ձեւավորված հարաբերություններն ու դրանց հետագա ամրապնդման անհրաժեշտությունը: Ընդգծվել է միջխորհրդարանական կապերի զարգացման կարեւորությունը:

Քննարկվել են նաեւ տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը վերաբերող հարցեր:

Ո՞Վ Է ՆՈՐ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿԸ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի մամուլի խոսնակ է նշանակվել Հովհաննես Յուքինյանը:

Բայց ո՞վ է նախարարության նոր խոսնակը, եւ ի՞նչ ճանապարհ է անցել մինչեւ պետական համակարգում այս պաշտոնին հայտնվելը:

Յուքինյանի մասնագիտական կենսագրությունը, դատելով բաց աղբյուրներից, հիմնականում ձեւավորվել է երեք ուղղությամբ՝ միջազգային հարաբերություններ, մեդիա եւ երիտասարդական/եվրոպական ծրագրեր:

Նա Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանող է եղել: 2022 թվականին ԵՊՀ-ն նրա մասին հրապարակում էր՝նշելով, որ «Էրազմուս+» ծրագրի շրջանակում նա կրթություն էր ստանում Պորտուգալիայի Էվորայի համալսարանում:

Յուքինյանի կենսագրության ուշագրավ հատվածներից մեկը Հանրային հեռարձակողի Մեդիա ակադեմիան է:

Հովհաննես Յուքինյանը աշխատել է լրագրող Հանրային հեռուստատեսության Մեդիա ակադեմիայում:

Հատկանշական է նաեւ նրա տարիքը. Յուքինյանը պետական բարձր պաշտոնական համակարգ է մտնում բավական երիտասարդ տարիքում: Նրա նախորդ կենսագրությունը ցույց է տալիս, որ նա այդ ճանապարհը սկսել է դեռ ուսանողական տարիներից՝ դպրոցական օլիմպիադաներից ու ԵՊՀ-ից, անցնելով միջազգային կրթական ծրագրերով եւ Հանրայինի մեդիա դպրոցով: Օլիմպիադաների պաշտոնական հրապարակումներում նրա անունը դեռեւս դպրոցական տարիներին՝ Արմավիրի մարզի Նորավանի միջնակարգ դպրոցի աշակերտների շարքում է հանդիպում:

Այսպիսով, ԿԳՄՍ նախարարության նոր խոսնակի կենսագրությունն առայժմ ավելի շատ երիտասարդ մասնագետի՝մեդիայից պետական համակարգ անցնելու պատմություն է:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԽԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԸ՝ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Ազգային ժողովում նոր պատգամավորական վերադասավորումներ են սպասվում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում որոշում է կայացվել հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ալխաս Ղազարյանին:

Մեր տեղեկություններով՝հարցը նախատեսվում է պաշտոնապես ներկայացնել հանձնաժողովի առաջիկա նիստում, որը պետք է կայանա սեպտեմբերի 8-ին: Հենց նիստի ընթացքում էլ, ըստ մեր տեղեկությունների, կհայտարարվի նոր տեղակալի թեկնածության մասին եւ կձեւակերպվի համապատասխան որոշումը:

Հատկանշական է, որ Ալխաս Ղազարյանը ՔՊ խմբակցության պատգամավոր է եւ վերջին ամիսներին ԱԺ-ում բավական ակտիվ ներգրավվածություն է ունեցել օրենսդրական աշխատանքում: Մասնավորապես, նա հեղինակակից է եղել մի շարք օրենսդրական նախաձեռնությունների, այդ թվում՝ Ընտրական օրենսգրքին, «Հանրաքվեի մասին» օրենքին, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերող նախագծերի:

Միեւնույն ժամանակ, այս նշանակումը ուշագրավ է նաեւ քաղաքական առումով: Ալխաս Ղազարյանը մինչ այս հիմնականում ակտիվ էր պետահիրավական ուղղության օրենսդրական աշխատանքներում:

Հավելենք, որ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը Սիսակ Գաբրիելյանն է:

Այս հանձնաժողովը պատասխանատու է գիտության, կրթության, մշակույթի, հայրենադարձության, սփյուռքի հետ կապերի, երիտասարդության, սպորտի, ինչպես նաեւ տեղեկատվության, մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսության ոլորտների խորհրդարանական վերահսկողության եւ օրենսդրական աշխատանքների համար:

Նշենք, որ Ալխաս Ղազարյանը առաջադրվել էր ԱԺ փոխնախագահի պաշտոնում, սակայն ՔՊ վարչությունը չընտրեց նրան:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Իրանը առաջիկա օրերին պատրաստվում է հայտարարել Հորմուզի նեղուցի մերձակայքում սահմանափակ գոտու ստեղծման եւ նավագնացության համար նոր երթուղու մասին: Իրանի անվտանգության ոլորտի բարձրաստիճան պաշտոնյա Մոհսեն Ռեզային հայտնել է, որ նոր երթուղին համաձայնեցվել է Օմանի հետ:

Ռեզային նշել է, որ նոր երթուղու վերաբերյալ որոշումները կհրապարակվեն «առաջիկա օրերին»: Նոր կարգավորումների նպատակն է ապահովել նավագնացության կազմակերպումը Հորմուզի նեղուցում, որը համարվում է համաշխարհային նավթային առեւտրի կարեւորագույն ծովային ուղիներից մեկը: Միեւնույն ժամանակ, Իսրայելի հարվածները շարունակվում են Լիբանանի հարավային շրջաններում: Ալ Ջազիրայի փոխանցմամբ՝ Կֆար Ռումման բնակավայրում իսրայելական հարվածների հետեւանքով զոհերի թիվը հասել է առնվազն 11-ի:

Լիբանանի պետական լրատվական գործակալության տվյալներով՝ զոհերից 9-ը, այդ թվում՝ երկու մանկահասակ երեխա, զոհվել են բնակելի շենքին հասցված հարվածի հետեւանքով: Եվս երկու մարդ զոհվել է նույն բնակավայրում քաղաքացիական մեքենայի ուղղությամբ իրականացված անօդաչու թռչող սարքի հարվածի հետեւանքով: Հաղորդվում է նաեւ վիրավորների մասին: Իսրայելական հարվածների հետեւանքով զոհերի թվում են նաեւ երկու բուժաշխատողներ: Միաժամանակ, Գազայի հատվածում իսրայելական հարվածի հետեւանքով զոհվել է 8-ամյա աղջիկ, որը դպրոցական տարվա առաջին օրը տուն վերադառնալիս գտնվել է մեքենայում: Հարձակման հետեւանքով եւս վեց մարդ վիրավորվել է: Իրավիճակի ֆոնին Իսրայելից հեռացող բժիշկների թվի վերաբերյալ հրապարակվել է նաեւ նոր ուսումնասիրություն: Թել Ավիվի համալսարանի հետազոտության համաձայն՝ 2023-2025 թվականներին առնվազն 1370 իսրայելցի բժիշկ երկրից հեռացել է առնվազն մեկ տարով: Իսրայելական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ այդ թիվը գրեթե կրկնակի գերազանցում է 2013-2015 թվականների ցուցանիշը: Իրանի եւ Իսրայելի միջեւ ռազմական լարվածության շարունակության պայմաններում Հորմուզի նեղուցի շուրջ ցանկացած նոր սահմանափակում կարող է կարեւոր նշանակություն ունենալ տարածաշրջանային եւ միջազգային նավագնացության համար:

Ա. Վ.

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հեռախոսով քննարկել են առեւտրատնտեսական եւ հումանիտար համագործակցության մի շարք արդիական հարցեր, հայտնում է Կրեմլի մամուլի ծառայությունը: «Հեռախոսազրույցի ընթացքում Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Ադրբեջանական Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւը քննարկել են առեւտրատնտեսական եւ հումանիտար համագործակցության մի շարք արդիական հարցեր», - ասվում է հաղորդագրության մեջ:

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Բյուրեղավանում ջրի հետ կապված խնդիրները կարծես չեն ավարտվում: Սեպտեմբերի 6-ին համայնքից աղիքային վարակին բնորոշ գանգատներով բուժօգնության է դիմել 6 քաղաքացի, որոնցից երեքը հոսպիտալացվել են: Երեկ ՀՎԿԱԿ-ը կրկին նմուշառում է իրականացրել՝ պարզելու հիվանդացության պատճառները:

Ուշագրավ է, որ սա Բյուրեղավանում ջրի հետ կապված առաջին նման դեպքը չէ: Դեռեւս հուլիսին ArmLur.am-ը գրել էր, որ համայնքում աղիքային վարակների դեպքերի ֆոնին ջրի 14 նմուշներից երեքում շեղումներ էին հայտնաբերվել: Այն ժամանակ եւս բնակիչներին հորդորվել էր ծորակի ջուրը չօգտագործել կամ օգտագործելուց առաջ եռացնել:

Այս իրավիճակում բնական հարց է առաջանում՝ ի՞նչ հետեւություններ են արվել նախորդ դեպքերից հետո, եւ ինչո՞ւ է նույն խնդիրը կրկին հայտնվում օրակարգում:

ArmLur.am-ը տեղեկացրել էր, որ Բյուրեղավանի համայնքապետը Հակոբ Բալասյանն է, ում անունը հանրության ուշադրության կենտրոնում հայտնվել էր նաեւ այլ պատճառներով: 2025 թվականի հոկտեմբերին Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել էր, որ Բալասյանին մեղադրանք է ներկայացվել պաշտոնական լիազորությունները չարաշահելու 9 դրվագով: Գործը վերաբերում էր ձեւական աճուրդների միջոցով հողերի ենթադրյալ ապօրինի օտարմանը: Նրա պաշտոնավարումը ժամանակավորապես կասեցվել էր:

Այս ֆոնին Բյուրեղավանում կրկին առաջացած ջրի խնդիրը հատկապես ուշագրավ է: Բնակիչների առողջությանը վերաբերող հարցում պատասխանատվությունը միայն ջրամատակարարող ընկերության վրա դնելը բավարար չէ. անհրաժեշտ է հասկանալ նաեւ համայնքապետարանի ձերբակալվածների շրջանակը:

Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել նախորդ դեպքերից հետո, արդյո՞ք իրականացվել են ջրագծերի եւ ջրամբարների լրացուցիչ ուսումնասիրություններ, ո՞վ է վերահսկել ջրի որակը եւ, ամենակարեւորը, ինչո՞ւ են Բյուրեղավանի բնակիչները կրկին կանգնել նույն խնդրի առաջ:

Այս հարցերի պատասխանները հատկապես կարեւոր են հիմա, երբ պաշտոնական մարմինները դեռեւս ուսումնասիրում են պատճառները, իսկ քաղաքացիների մի մասը ստիպված է խուսափել ծորակի ջրից:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ Է ՀԱՅՏՆԵԼ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարող է առաջիկայում այցելել Մոսկվա: Ռուսաստանի նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովի խոսքով՝ այցի հստակ ժամկետը դեռ որոշված չէ:

Փաշինյանի Մոսկվա այցի մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվել սեպտեմբերի 1-ին Բիշքեկում՝ Փաշինյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպման ժամանակ:

Մոսկվա նախատեսվող այցի ընթացքում, ըստ ամենայնի, քննարկումների առանցքում կլինեն հայ-ռուսական հարաբերությունները, դրանց վերաձեւակերպման անհրաժեշտությունը, այդ թվում՝ Հայաստանի՝ ԵՄ-ի եւ ԵԱՏՄ-ի հետ հարաբերությունների հետագա ընթացքը: Փաշինյանն արդեն հայտարարել է, որ ցանկանում է Մոսկվայում Պուտինի հետ շարունակել «անկեղծ եւ կառուցողական» խոսակցությունը:

Հիշեցնենք, որ բիշքեկյան հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի՝ Եվրամիությանը հնարավոր անդամակցելու գործընթացը եւ ԵԱՏՄ-ում Հայաստանի անդամակցության հարցը: Պուտինը նշել է, որ ԵՄ-ին եւ ԵԱՏՄ-ին միաժամանակ անդամակցությունը հնարավոր չէ եւ կոչ է արել Երեւանին հնարավորինս արագ հստակեցնել իր դիրքորոշումը: Փաշինյանը, իր հերթին, հայտարարել է, որ Հայաստանը ԵԱՏՄ-ից դուրս գալու մասին դեռ չի հայտարարել: Նա նշել է, որ երկու երկրների հարաբերությունները կարեւոր են, սակայն նոր պայմաններում դրանք վերաձեւակերպման կարիք ունեն:

Կողմերը պայմանավորվել են երկխոսությունը շարունակել Մոսկվայում՝ փակ հանդիպմամբ:

Ն. Ա.

ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՑ

Ֆինանսների նախարարության երկու փոխնախարարներ՝ Արման Պողոսյանն ու Ավագ Ավանեսյանը, ազատվել են զբաղեցրած պաշտոններից:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումներով՝ Ֆինանսների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Արման Պողոսյանն ու Ֆինանսների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Ավագ Ավանեսյանն ազատվել են պաշտոններից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներով՝ վարչապետը որոշել է ազատել նրանց զբաղեցրած պաշտոններից:

Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը սոցիալական ցանցում անդրադարձել է երկու փոխնախարարների հեռանալուն՝ նշելով, որ Արման Պողոսյանն ու Ավագ Ավանեսյանը տարիներ շարունակ ղեկավարել են իրենց թիմերը եւ ներդրում ունեցել նախարարության կայացման ու զարգացման գործում:

«Այսօր ճանապարհում ենք մեր սիրելի ընկերներին՝ Արման Պողոսյանին եւ Ավագ Ավանեսյանին, ովքեր իրենց աշխատանքը ավարտում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում»,- գրել է նախարարը:

Միաժամանակ Վահե Հովհաննիսյանը ողջունել է Համլետ Սահակյանին, որը, ըստ նախարարի, միանում է ֆինանսների նախարարության թիմին: Նախարարը նշել է, որ Սահակյանի հետ նախկինում աշխատել են ՊԵԿ նախագահի տեղակալի կարգավիճակում, եւ վստահություն է հայտնել, որ նրա նշանակումը կնպաստի ինչպես Ֆինանսների նախարարության աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ ՖՆ-ՊԵԿ համագործակցության բարելավմանը:

Ս. Գ.

Ո՞Վ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 8-ին նախատեսված է Ազգային ժողովի աշխատանքի եւ բարեկեցության հարցերի մշտական հանձնաժողովի նիստը: Մեր տեղեկությունների համաձայն՝ նիստի ընթացքում նախատեսվում է ընտրել հանձնաժողովի նախագահի տեղակալ: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ այդ պաշտոնում առաջադրվել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մարիամ Պողոսյանի թեկնածությունը:

Նշենք, որ Մարիամ Պողոսյանը արդեն երկու գումարման ԱԺ պատգամավոր է, վերջինս եղել է վարչապետի աշխատակազմի ղեկավար Լիլիթ Մակունցի օգնականը Ազգային Ժողովում:

Ս. Գ.

ՎՃԻՌԸ ԿԱՅԱՑՎԵՑ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ 6 ՏԱՐԻ ԱՆՑ

Նոյեմբերի 9-ի գիշերը, երբ հայտնի դարձավ Ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության եւ հրադադարի եռակողմ հայտարարության ստորագրման մասին, Երեւանում անկարգություններ սկսվեցին, հարձակման ենթարկվեցին Ազգային ժողովի եւ Կառավարության շենքերը:

Այս դեպքերից 5 տարի անց նախաքննական մարմինը հայտնաբերեց այն անձանց, որոնք վրդովված մուտք էին գործել ԱԺ եւ Կառավարության շենքեր, եւ պարբերաբար ձերբակալում էր նրանց:

Եւ ահա, դատարան է մուտք գործել 6 անձանց մասով քրեական գործը, եւ դատարանի առաջ են կանգնել Հովհաննես Սալիբեկյանը, Նարեկ Մնացականյանը, Արմենակ Ջավադյանը, Շանթ Կարապետյանը, Եգոր Ստեփանյանը, Սարգիս Հովհաննիսյանը, որոնց մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, մասնակցելով զանգվածային անկարգություններին, վնասել են գույք:

Եւ այսպես, 2026 թվականի հունիսի 23-ին դատարանը վճիռ է կայացրել:

Մեղադրյալ Հովհաննես Վահանի Սալիբեկյանին մեղավոր ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման մեջ եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով (հաշվակցելով անազատության մեջ գտնվելու 1 օրը):

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Եգոր Համլետի Ստեփանյանին մեղավոր ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման մեջ եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով (հաշվակցելով անազատության մեջ գտնվելու 1 օրը):

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Մեղադրյալ Շանթ Աշոտի Կարապետյանին մեղավոր ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման մեջ եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով (հաշվակցելով անազատության մեջ գտնվելու 1 օրը):

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Մեղադրյալ Շանթ Աշոտի Կարապետյանի վրա դնել պարտականություն՝ փորձաշրջանի ամբողջ ժամանակահատվածում չփոխել մշտական բնակության վայրը:

Մեղադրյալի պատժի կրման ժամկետի սկիզբը հաշվարկել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության տարածքային մարմնում հաշվառման վերցվելու պահից:

Նարեկ Հրաչյայի Մնացականյանին, Սարգիս Հմայակի Հովհաննիսյանին, մեղադրյալ Արմենակ Դավթի Ջավադյանին մեղավոր ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման մեջ եւ նրանց նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով (հաշվակցելով անազատության մեջ գտնվելու 1 օրը):

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրանց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՅԼԵՎՍ ԵՐԲԵՔ ՀԱՅԱՍՏԱՆ ՉԻ ԳԱ

90-ականներին ՀՀ պաշտպանության նախարարությունում ամենաբարձր պաշտոնները զբաղեցրած եւ այժմ ՌԴ-ում բնակվող ԽՍՀՄ եւ ՀՀ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը, որը ՀՀ զինված ուժերի ձեւավորման գործընթացի առանցքային մասնակից է եւ Հայաստանում ռուսական ռազմական ներկայության ստեղծման գաղափարի հեղինակներից մեկը, հրաժարվել է ՀՀ անձնագրից: Թե ինչով է պայմանավորված, «Իրավունք»-ի հետ զրույցում գեներալն անկեղծացավ. «Ես գնացի հյուպատոսարան եւ վերադարձրեցի ՀՀ անձնագիրս: Ինձ զարմացած հարցնում են՝ պարո՞ն Տեր-Գրիգորյանց, ի՞նչ եք անում: Ես էլ ասացի՝ բա ի՞նչ անեմ, երբ Հայաստանում եկել են իշխանության մարդիկ, որոնք դավաճանել են մի բուռ մնացած հայ ժողովրդին եւ ուզում են թուրքերի միջոցով ոչնչացնել: Ես հանձնեցի անձնագիրս, իսկ ձեր այսօրվա նախագահականից ստացա հաղորդագրություն. «Դուք զրկված եք քաղաքացիությունից»:

Դե, ցտեսություն, իմ հարազատներ: Ես այլեւս երբեք Հայաստան չեմ գա: Վե՜րջ»:

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է Հովհաննավանքում վերջին շրջանում տեղ գտնող մտահոգիչ երեւույթը՝ վանքապատկան տարածքում անհարիր միջոցառումների, այս պարագայում՝ խնջույքի անցկացումը, ինչը խաթարում է վանքի հոգեւոր եւ աղոթական մթնոլորտը, անհանգստություն պատճառում շրջակայքի բնակչությանը: Այս մասին հայտնում են Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից:

«Այս իրավիճակն անմիջական հետեւանքն է կարգալույծ հռչակված Ստեփան Ասատրյանի նկատմամբ իշխանությունների բացահայտ հովանավորության եւ թողտվության, որով ուղղակի ոտնահարվում են ՀՀ օրենքները եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավունքները: Հովհաննավանքի բռնազավթված լինելու իրողությունը, տեղ գտնող ինքնիրավչությունը նաեւ վիրավորում են հավատացելոց բարեպաշտական զգացումները, ոտնահարում իրավունքները՝ անվավեր ծեսերով ու խորհրդակատարություններով մոլորության մեջ գցելով բարեպաշտ այցելուներին:

Անթույլատրելի նկատելով այս երեւույթները՝ Մայր Աթոռը վերստին կոչ է ուղղում պատկան պետական մարմիններին՝ զերծ մնալու եկեղեցական կյանքին պառակտիչ միջամտություններից եւ վերականգնելու զավթյալ բոլոր եկեղեցիների օրինական կարգավիճակը»,- նշված է հայտարարության մեջ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԽՈՇՏԱՆԳԵԼ ԵՆ

Փաստաբան Աշոտ Սիմոնյանը գրում է. «Խոշտանգումները սկսում են մասսայական բնույթ են կրել՝ խոստովանական ցուցմունքների ակնկալիքով:

2026թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 13:30-ի սահմաններում, քաղաքացին իր շենքի բակին կից փողոցի մայթով քայլելիս կանգնեցվել է պարեկային ծառայության՝ ավտոմեքենայով ծառայություն իրականացնող կարգախմբի կողմից, անհասկանալի հանգամանքներում ուժ է կիրառվել նրա նկատմամբ, տարվել է Շենգավիթի ոստիկանության բաժին, որտեղ նրա անձնական խուզարկությամբ ՈՉԻՆՉ չհայտնաբերելուց հետո, ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացին ենթարկվել է խոշտանգման՝ այն նպատակով, որ վերջինս խոստովանի իբր իր մոտ որոշակի չափաքանակով՝ մոտ 0,5 գրամ ՄԱՐԻՒՈՒԱՆԱ թմրամիջոցի առկայության մասին:

Շուրջ 6 ժամ ոստիկանությունում ապօրինի պահվելուց ու խոշտանգման ենթարկվելուց հետո, քաղաքացուն ներկայացրել են ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի քննչական բաժին, որտեղ քաղաքացին, զրկված լինելով իրավական որեւէ տեսակի օգնությունից, աջակցությունից, ստիպված «խոստովանել» է, թե ոստիկանության աշխատակիցների կողմից բերված թմրամիջոցն իբր իրենն է եւ իր անձնական օգտագործման համար է: Արդեն այսօր, քաղաքացին դիմել է ինձ՝ ստանձնելու նրա շահերի պաշտպանությունը: Բոլոր վնասվածքները մասնավոր կենտրոնում բժշկական զննությամբ ֆիքսվելու են եւ տրամադրվեն վարույթն իրականացնող մարմնին եւ Դատախազությանը: Ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:

Ակնկալում ենք նույնիսկ հանցագործություն չհամարվող՝ մանր չափերով թմրամիջոց պահելու հանցանքը անձի վրա բարդելու եւ խոշտանգման միջոցով հանցանքի ընդունմանն ուղղված գործողությունների համար մեղավոր ԲՈԼՈՐ անձանց պատասխանատվությունը, քանի որ նման գործելակերպով իրավապահ համակարգի որոշ ներկայացուցիչներ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ ու անվերադարձ կերպով արատավորում են նաեւ իրենց տասնյակ ու հարյուրավոր բարեխիղճ գործընկերների համբավը եւ Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական պետության համբավը»:

ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Ինչու Ազգային ժողովի աշխատակազմը ամբողջական չի վճարում նախկին աշխատակիցների վերջնահաշվարկը, ինչից դրդված քաղաքացիները դիմում են դատարան:

Մեզ հայտնի դարձավ, որ Սվետլանա Համբարձումյանը վերջնահաշվարկի գումարից պահում կատարելն անօրինական ճանաչելու, պակաս վճարված գումարը վերադարձնելու, չօգտագործված արձակուրդի օրերի համար վճարում կատարելուն եւ Աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի կանոններով կետանցված յուրաքանչյուր օրվա համար տուժանք վճարելուն պարտավորեցնելու համար հայց է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի:

Գործը մակագրվել է Երեւանի քաղաքացիական դատարանի դատավոր Անի Աթանեսյանին:

Ք. Մ.

● *Օգոստոսի 24-ից 31-ը մայրաքաղաքում պարեկները բացահայտել են առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 39 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

18 ՏԵՂԱՄԱՍ

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը օգոստոսի 31-ին որոշում է ընդունել 2026թ. հոկտեմբերի 25-ին տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին նախապատրաստվելու համար Դիլիջան համայնքում սահմանել 18 ընտրական տեղամասային կենտրոններ: Դրանցից 10-ը տեղակայված են Դիլիջան քաղաքում, 2-ական տեղամասային կենտրոններ՝ համայնքի Հաղարծին եւ Գոշ գյուղերում, մեկական՝ Թեղուտ, Հովք, Աղավնավանք, - Խաչարձան գյուղերում: Ընտրական տեղամասերը տեղակայված են քոլեջների, հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների գրադարանի, մշակույթի տների, ակումբների, համայնքային կենտրոնների շենքերում: Դիլիջանի ավագանու նախորդ համամասնական ընտրություններից հետո՝2021թ. հոկտեմբերին, Իջեւանում տեղակայված թիվ 38 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Աիդա Սարգսյանը հայտնել է, որ 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան խոշոր համայնքի ավագանու ընտրություններին ցուցակային 18 374 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 8085-ը: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026թ. հոկտեմբերի 25-ին կայանալիք Դիլիջան համայնքի ավագանու ընտրություններին ընտրողների թիվը 19 622 է: Անցած հնգամյակում ի՞նչի հաշվին Դիլիջան համայնքի ընտրողների թիվն աճեց 1248-ով, երբ Դիլիջան համայնքի բնակչությունը բնական աճ չունի, համայնքից արտագաղթը, թեեւ դանդաղ տեմպով, դեպի Հայաստանի այլ բնակավայրեր եւ արտերկիր շարունակվում է;

ՉԻ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ

Հունիսի 19-20-ը կարկուտը մեծ վնասներ է հասցրել սահմանամերձ Ոսկեպար, Կիրանց, Աճարկուտ, Բերքաբեր, Ոսկեվան, Կոթի, Բաղանիս, Ջուջեւան գյուղերին: Խոշոր, հավի ձվի չափ, անկանոն տեսքով, ելուստներով կարկտահատիկներն ավերել են բանջարանոցներ, այգիներ, խաղողի վազեր, ծակել տների, անասնագոմերի, տներին կից սարայների ու այլ շինությունների ասբոշիֆերյա ծածկեր, վնասել դրսում կայանած ավտոմեքենաներ: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն հարցում եմ ել այդ կարկտահարության վնասների չափի մասին: Նախարարությունից հայտնել են. «2026թ. հունիսի 19-20-ը Իջեւան եւ Նոյեմբերյան համայնքում կարկտահարության վնասների հետ կապված բնակիչների դիմումների հիման վրա, արտակարգ իրավիճակների հետեւանքներով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, վնասները հաշվառվել եւ ներկայացվել են հանրապետական հանձնաժողովի քննարկմանը: Արտակարգ իրավիճակների հետեւանքներով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում եւ հրապարակում է արտակարգ իրավիճակների հետեւանքներով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐ ՔԱՐՏԵԶ

ԻՆՉ Է ՑԱՆԿԱՆՈՒՄ ՓՈԽԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կիրակի օրը Truth Social սոցիալական ցանցում քարտեզ է հրապարակել, որտեղ Նյու Մեքսիկո նահանգի անվանումը փոխարինված է «New America»՝ «Նոր Ամերիկա» անվամբ:

Հրապարակված քարտեզում «Mexico» բառը կարմիր գծով ջնջված է, իսկ դրա փոխարեն գրված է «America»: Թրամփը հրապարակմանը որեւէ բացատրություն չի կցել: Սպիտակ տունը նույնպես չի հայտարարել Նյու Մեքսիկոյի անվան պաշտոնական փոփոխության որեւէ նախաձեռնության մասին:

Միեւնույն ժամանակ, Թրամփը իրավասու է որոշ աշխարհագրական օբյեկտների, այդ թվում՝ ջրային տարածքների, անվանումներ փոխելու ԱՄՆ աշխարհագրական անվանումների համակարգում, սակայն նահանգի անվանումը նախագահի հրամանով փոխել հնարավոր չէ: Նահանգի անվան փոփոխության համար անհրաժեշտ է համապատասխան գործընթաց հենց տվյալ նահանգի մակարդակով:

Թրամփը վերջին շրջանում մի քանի անգամ հանդես է եկել աշխարհագրական անվանումները փոխելու նախաձեռնություններով: 2025 թվականի հունվարին՝ պաշտոնը ստանձնելու առաջին օրը, նա հրամանագիր էր ստորագրել Մեքսիկական ծոցի անվանումը «Ամերիկայի ծոց» փոխելու վերաբերյալ: Ավելի ուշ փոխվեց նաեւ Օնտարիո լճի անվանումը՝ «Ամերիկա լիճ»:

Թրամփի նոր հրապարակմանը արձագանքել է Նյու Մեքսիկոյի նահանգապետ, Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Միշել Լուժան Գրիշամը: Նա հայտարարել է, որ նահանգի անվանումը քննարկման ենթակա չէ՝ Թրամփին մեղադրելով ամերիկացիների ուշադրությունը այլ խնդիրներից շեղելու փորձի մեջ:

«Մինչ նախագահը փորձում է շեղել ամերիկացիների ուշադրությունը Իրանում իր աղետալի պատերազմից, վառելիքի գները շարունակում են աճել»,- գրել է նահանգապետը X-ում:

Թրամփի հրապարակմանը քննադատաբար է արձագանքել նաեւ Նյու Մեքսիկոն ներկայացնող դեմոկրատ սենատոր Մարտին Հայնրիխը՝նշելով, որ ինքը միշտ օգտագործելու է աշխարհագրական օբյեկտների իրական անվանումները՝ Մեքսիկական ծոց, Օնտարիո լիճ եւ Նյու Մեքսիկո: Նյու Մեքսիկո նահանգի անվանումը պատմականորեն գալիս է դեռեւս 16-րդ դարից՝նախորդելով ԱՄՆ-ի հիմնադրմանը:

Թրամփը նախկինում եւս հայտարարել է աշխարհագրական օբյեկտների անվանումները փոխելու իր ցանկության մասին՝ դրանք ներկայացնելով որպես նախագահական լիազորությունների դրսեւորում: Օնտարիո լճի անվան փոփոխության նախաձեռնությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ի եւ Կանադայի միջեւ առեւտրային լարվածության պայմաններում:

Թրամփը նաեւ չի բացառել ԱՄՆ-ի հարեւանությամբ գտնվող օվկիանոսներից մեկի անվան փոփոխությունը՝ հայտարարելով, որ հնարավոր է փոխվի Ատլանտյան կամ Խաղաղ օվկիանոսի անվանումը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆԸ

Սյունիքի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող՝ 22/8 հողամաս հասցեում գտնվող՝ 0,03 հա մակերեսով հողատարածքը, օրենքի պահանջների խախտմամբ, կառուցապատման իրավունքով հատկացվել է ֆիզիկական անձի:

Դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել Սիսիան համայնքի ղեկավարին՝ Սիսիան համայնքի եւ կառուցապատողի միջեւ 2009 թվականի հուլիսի 7-ին կնքված կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Միջնորդագրի հիման վրա, Սիսիանի համայնքապետարանի իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, Կադաստրի կոմիտեում դադարեցվել է Սիսիան համայնքի «Մայիսի 28» զբոսայգում գտնվող՝ 0,03 հա մակերեսով, 564 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը. հողամասը վերադարձվել է Սիսիան համայնքի տիրապետմանը:

Նշենք, որ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի «Մայիսի 28-ի» անվան զբոսայգին զբաղեցնում է 9595.68 քմ տարածք, որտեղ գտնվող հողատարածքները կառուցապատման իրավունքով կնքված պայմանագրերով հատկացվել են 17 անձի:

Դատախազական ներգործության արդյունքում՝նշված այգում գտնվող հողատարածքներից առ այսօր Սիսիան համայնքին վերադարձվել է 7 անձի տրամադրված 4934,48 քմ մակերեսով 9 հողատարածք: Դրանք են՝

0,03 հա մակերեսով հողամասը,
0,05308 հա մակերեսով հողամասը,
0,0450 հա մակերեսով հողամասը,
0,05 հա մակերեսով հողամասը,
0,0451 հա մակերեսով հողամասը,
0,08 հա մակերեսով հողամասը,
0,02 հա մակերեսով հողամասը,
0,0402 հա մակերեսով հողամասը,
0,13 հա մակերեսով հողամասը:

10 անձի տրամադրված 11 հողատարածքները համայնքին վերադարձնելու աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

ՀՀ գլխավոր դատախազությունը տեղեկացրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանը 2026թ. մարտի 26-ի վճռով բավարարել է Գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի եւ ֆիզիկական անձի: Վճռով՝ անվավեր էր ճանաչվել 0.12 հա մակերեսով հողամասի վերաբերյալ 2011թ. հոկտեմբերի 7-ին անցկացված աճուրդը եւ, որպես անվավերության հետեւանք, ի թիվս այլնի, անվավեր էր ճանաչվել նաեւ հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Օրինական ուժ ստացած դատական ակտի հիման վրա՝ 2026 թվականի օգոստոսի 29-ին Կադաստրի կոմիտեում Վայոց ձորի մարզի Արենի համայնքի սեփականության իրավունքն է գրանցվել 0.12 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

● *Մարզերում օգոստոսի 24-ից 31-ը պարեկները հայտնաբերել են առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝266 դեպք:*

ԺՈՂՈՎՈՒՐԴ

www.ArmLur.am

ԼՈՒՐԵՐ

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել է 2026-2027 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 5-12-րդ դասարանների յուրաքանչյուր դասագրքի համար ներդրումային գումարի չափը: Հանրակրթության նոր չափորոշչի շրջանակում ստեղծված նոր դասագրքերի վարձակալության միջին վճարները նվազել են ավելի քան 60 տոկոսով:

Միաժամանակ, դասագրքերի վարձակալության վճարները համարվում են կրթության գծով սոցիալական ծախս եւ ենթակա են փոխհատուցման 5-12-րդ դասարաններում (1-4-րդ դասարանների դասագրքերն աշակերտներին տրամադրվում են անվճար):

Փոխհատուցումը կատարվում է յուրաքանչյուր աշակերտի համար տարեկան 3000 դրամի չափով: Փոխհատուցման համար հիմք է ընդունվում ԿԳՄՍ նախարարության կողմից հարկային մարմնին տրամադրված 5-12-րդ դասարանների աշակերտների եւ նրանց ծնողների վերաբերյալ տեղեկատվությունը (անուն, ազգանուն, ՀԾՀ):

ԿԳՄՍ նախարարությունից հիշեցնում են՝ ՀՀ պետական եւ ոչ պետական հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների սովորողների դասագրքերը տրամադրվում են անվճար՝ համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի: Նշված դասարանների դասագրքերի արժեքը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ազգային փոքրամասնությունների սովորողների դասագրքերը եւ բրայլյան տառատեսակով տպագրվող դասագրքերը եւս տրամադրվում են անվճար՝ պետական միջոցների հաշվին:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐ

2026 թվականի հոկտեմբերին Վրաստանում կանցկացվեն Հայաստանի մշակույթի օրեր՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին: Սեպտեմբերի 3-ին՝ նախապատրաստական աշխատանքների շրջանակում, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանը մեկնել է Թբիլիսի, հանդիպել Վրաստանի մշակույթի նախարարի տեղակալ Գիորգի Միրցխուլավայի հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Սմբատյանը: Կողմերը քննարկել են Հայաստանի մշակույթի օրեր ծրագրի կազմակերպմանն առնչվող հարցեր, անդրադարձել երկկողմ մշակութային կապերի զարգացման նոր հնարավորություններին: Նախարարի տեղակալն այցելել է նաեւ Թբիլիսիի Զաքարիա Պալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, հանդիպել թատրոնի գեղարվեստական ղեկավար Բադրի Մայսուրաձեի հետ: Վրաստանում Հայաստանի մշակույթի օրեր ծրագիրը կմեկնարկի Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գալա-համերգով, որը տեղի կունենա հոկտեմբերի 7-ին: Նախատեսվում է նաեւ Երվանդ Քոչարի աշխատանքների ցուցադրություն, որը կգործի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 8-ը:

ԱՅՑ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության ու Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, ինչպես նաեւ «Հրանտ Դինք» ու Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամների կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագրի շրջանակներում հայկական տարբեր ընկերություններ ներկայացնող 16 գործարար հունիսի 29-30-ը այցելել են Թուրքիայի արեւելյան շրջաններ՝ Իգդիր եւ Վան:

Այցի ընթացքում հայ եւ թուրք գործարարների հանդիպումներ են տեղի ունեցել Իգդիրի եւ Վանի առեւտրաարդյունաբերական պալատներում, կազմակերպվել է այցելություն Իգդիրի արդյունաբերական գոտի, որտեղ դիտարկվել են առեւտրի, ներդրումների եւ միջսահմանային գործարար համագործակցության հնարավորությունները: Շինարարության, ծաղկաբուծության, իրավաբանական ծառայությունների, տեքստիլի, ջրի, հյութերի, սուրճի, կաթնամթերքի, ալյումինի արտադրությունների եւ այլ ոլորտների ներկայացուցիչները մասնակցել են նաեւ B2B ձեւաչափով բանակցությունների:

Ըստ ՀԱԳՄ ծրագրերի ղեկավար Արթուր Ղազարյանի՝ հանդիպումների նպատակն էր հաստատել գործարար կապեր թուրք գործընկերների հետ, ուսումնասիրել ապագա համագործակցության հնարավորությունները, քննարկել միջսահմանային գործարար կապերի եւ գործընկերության ամրապնդման հնարավորությունները: Նրա խոսքով՝ ՀԱԳՄ-ն 1990-ական թվականներից ի վեր աշխատում է Հայաստան-Թուրքիա տնտեսական հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ: Այս երկար գործընթացում եղել են ինչպես դրական զարգացումներ, այնպես էլ խոչընդոտներ: Չնայած երկու երկրների միջեւ պաշտոնական գործարար հարաբերությունների բացակայությանը, ոչ պաշտոնական գործարար կապերը շարունակում էին գոյություն ունենալ: Արթուր Ղազարյանի համոզմամբ՝ ներքեւից վերեւ նախաձեռնությունների միջոցով գործարարները կարող են կարեւոր դեր խաղալ երկկողմ հարաբերությունների բարելավման, սահմանների բացմանը նպաստելու գործում: Այս առումով նա ընդգծել է Թուրքիայի՝ Հայաստանին ամենամոտ գտնվող շրջանների հետ գործակցելու վրա կենտրոնանալու կարեւորությունը:

Իրենց հերթին սահմանների բացումը մեծապես կարեւորել են նաեւ Իգդիրի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Քամիլ Արսլանը եւ Վանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Նեջդեթ Թաքվանը: Քամիլ Արսլանի կարծիքով՝առեւտրային հարաբերությունները կարող են հետագայում զարգանալ, հատկապես՝ սահմանի բացումից հետո, քանի որ Վրաստանով անցնող ներկայիս ճանապարհը ստեղծում է լրացուցիչ լոգիստիկ խոչընդոտներ եւ սահմանափակում տնտեսական համագործակցության ներուժը: Նա հույս է հայտնել, որ սահմանը շուտով կբացվի, առնվազն՝ երրորդ երկրների ներկայացուցիչների եւ տնտեսական նպատակներով ճանապարհորդող գործարարների համար, ինչին իրենք մեծ նշանակություն են տալիս:

Ընդգծելով համագործակցելու իրենց պատրաստակամությունը՝ Նեջդեթ Թաքվանը նշել է, որ ՎԱԱՊ-ն Հայաստանը միշտ դիտարկել է որպես տնտեսական համագործակցության պոտենցիալ գործընկեր, եւ ներկայում էլ պատրաստ է աջակցել երկու երկրների գործարարների միջեւ երկխոսությանը: Կողմերն ընդգծել են փոխգործակցության նկատմամբ հստակ հետաքրքրության առկայությունը, տնտեսական կապերը խթանող համապատասխան հարթակի ստեղծման, առաջիկայում երկկողմ համագործակցության հուշագրի ստորագրման անհրաժեշտությունը: ՀԱԳՄ ծրագրերի ղեկավարը թուրք գործարարներին հրավիրել է մասնակցելու սեպտեմբերի 3-4-ը Երեւանում կայանալիք հայ-թուրքական գործարար համաժողովին:

«Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ «CIPRIANI»-Ի ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Գ.

Օրերս Երեւանում կարող էինք տեսնել համաշխարհային հյուրընկալության ոլորտի ամենաազդեցիկ դեմքերից մեկին՝ իտալական լեգենդար «Cipriani» բրենդի սեփականատեր Ջուզեպպե Չիպրիանիին՝ «Ռենշին» ընկերության տնօրեն Էդուարդ Մարությանի հետ:

Միջազգային բիզնեսի նման տրամաչափի ներկայացուցիչների այցերը Հայաստան հաճախակի չեն լինում, եւ, որպես կանոն, դրանք զուտ զբոսաշրջային բնույթ չեն կրում: «Cipriani» ընկերությունն անշարժ գույքի ոլորտում այն բարձրագույն լիգան է, որտեղ բնակելի տարածքը միավորվում է պրեմիում հյուրանոցային սպասարկման հետ:

Դատելով ընկերության կայքում հրապարակված լուսանկարից՝Չիպրիանիին Երեւանում ուղեկցում էր հայաստանյան խոշորագույն կառուցապատողներից մեկի՝ «Ռենշին» ընկերության թիմը: Կարելի է նաեւ ենթադրել, որ նրանք էլ Հայաստան էին հրավիրել լույքս անշարժ գույքի ոլորտի լեգենդին:

Նախկինում, երբ «Ռենշինի» հրավերով կամ ուղեկցությամբ Հայաստան է ժամանել միջազգային համբավ ունեցող դեմք կամ կառույց, ապա շատ չանցած ազդարարվում է նոր, նախագծի կամ համագործակցության մեկնարկ: Այդպես եղավ միջազգային առաջատար ճարտարապետական բյուրոների ներգրավման ժամանակ: Հավանաբար իտալացի գործարարը Երեւանում ուսումնասիրում էր քաղաքի միջավայրն ու ներդրումային պոտենցիալը՝հենց «Ռենշինի» ապագա նախագծերի շրջանակում: Թե կոնկրետ ինչ ձեւաչափով կստացվի այս համագործակցությունը ցույց կտա ժամանակը: Ընկերությանն ուղղված մեր հարցին պատասխանեցին, որ դեռեւս ասելիք չունեն:

Բայց փաստն այն է, որ հայաստանյան անշարժ գույքի շուկայում լուրջ իրադարձություններ են հասունանում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՇՈՒՆ

ԹԵԹԵՎ ԵՎ ՇՆՉՈՂ ՋԻՆՍԵ ԲԱՃԿՈՆՆԵՐ

Ոչինչ ավելի վատ չէ, fան առավոտյան frsնել ավիsեrի մեջ, իսկ մայrամուsից hեsn grsից դողալ, այնղես nr մենf փնsrում ենf թեթեւ եւ ճնչող ճեrsավnr հագուսsներ նnr սեզոնի համար: Վեrջերu մի fանի hայsնիներ hիճեցrել են մեզ, nr ջինսե բաճկոնը աճնանային ղարsադիr իr է, nrը արժանի է sեղ ունենալ ձեr կաղսուլային զգեսsաղահարանում:

Միշել Օբաման վերջին փոդքասթի ձայնագրման ժամանակ կրում էր կառուցվածքային մուգ ջինսե վերնաշապիկ՝ հաղորդելով նրբագեղ տեսք: Ամերիկա Ֆերերան ընտրել էր անթերի թուխ տարբերակ՝ Անգլիայում զբոսնելիս: Իսկ Օփրա Ուինֆրին վինտաժային ոճ էր ցուցադրել՝ կրելով մեծ չափսի ջինսե բաճկոն՝ որպես վերնաշապիկ, համադրելով համապատասխան լայն ոտքերով ջինսերի հետ:

Ոգեշնչվելով նրանց դասական հանդերձանքներից՝ մենք գտել ենք նմանատիպ ջինսե վերնաշապիկներ եւ բաճկոններ Quince-ից:

Օբամայի տարբերակի նման՝ այս չորեքթեւ բաճկոնը գալիս է աշնանային մուգ երանգով եւ ունի աչքի ընկնող առջեւի գրպաններ: Սպիտակ կարը նրբագեղություն է հաղորդում կառուցվածքային այս շերտին՝ այն դարձնելով բնական համադրություն լայն ջինսերի կամ ծավալուն տաբատների հետ: Ավելին, գնորդներից մեկն այն անվանել է «վերջին տասնամյակի իր սիրելի ջինսե բաճկոնը»:

Ֆերերայի հանգիստ ոճը կրկնելու համար ընտրեք մեծ չափսի ջինսե բաճկոն՝ նմանատիպ երանգով: Այն իդեալական է աշնան համար, քանի որ հագվում է սվիտերների վրայից՝ առանց ծավալուն թվալու, իսկ շնչող 100% բամբակյա տարբերակը կարելի է կրել ցանկացած սեզոնի: Ավելի լավ՝ երկրպագուներից մեկն ասել է, որ «փափուկ եւ կառուցվածքային» այս բաճկոնը հիանալի է «զով, անցումային եղանակների համար»: Քանի որ մի քանի գնորդներ այն անվանել են իրենց «սիրելին», մենք պետք է այն ներառեինք մեր ցանկում: Այն հեշտ է կրել կոճկված՝ որպես վերնաշապիկ, ինչպես Օփրան, կամ զգեստների, սվիտերների ու շապիկների վրայից: 80 տարեկան մի գնորդ այն անվանել է իր «գնալու բաճկոն» զով երեկոների համար:

Թեեւ ջինսե բաճկոնները թեթեւ են, դրանք կարող են արժեքավոր տեղ զբաղեցնել ճամպրուկում: Եթե նախատեսում եք ճանապարհորդել եւ ցանկանում եք նվազագույնի հասցնել ձեր իրերի ցանկը, փոխարենը փորձեք մեծ չափսի վերնաշապիկ, ինչպես Quince-ի այս տարբերակը: Այն ձեզ տաք կպահի եւ հեշտ է ծալել կամ գլորել ուղեբեռի մեջ՝ առանց ավելորդ ծավալ տալու:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԵՌԱՑԱՎ ՓՅՈՒՆԻԿԻՑ

Երեւանի «Փյունիկը» պաշտոնապես հայտարարել է թիմի գլխավոր մարզիչ Արտակ Օսեյանի պաշտոնանկության մասին, սակայն այս որոշմանը զուգահեռ ի հայտ են եկել կուլիսային ուշագրավ մանրամասներ, որոնք կապված են ակումբի ղեկավար կազմում տեղի ունեցած փոփոխությունների հետ, գրում է armsport-ը:

Ըստ ակումբի մամուլի ծառայության տարածած հաղորդագրության՝ «Փյունիկը» եւ Արտակ Օսեյանը երկկողմ համաձայնությամբ խզել են մասնագետի գործող պայմանագիրը: Օսեյանի հետ համագործակցության դադարեցման շրջանակում մարզչական շտաբը լքում են նաեւ գլխավոր մարզչի օգնականներ Արթուր Մկրտչյանն ու Գոռ Մալաքյանը, ինչպես նաեւ դարպասապահների մարզիչ Գուրգեն Հակոբյանը:

Արտակ Օսեյանը գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնել էր 2025 թվականի օգոստոսին: Սա նրա երրորդ համագործակցությունն էր ակումբի հետ (նախկինում ղեկավարել է թիմը նաեւ 2016/17 եւ 2020 թվականներին): 2025/26 մրցաշրջանում նրա գլխավորությամբ «Փյունիկը» Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունն ավարտեց 3-րդ հորիզոնականում՝ նվաճելով ՈւԵՖԱ-ի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փուլի ուղեգիր: Իսկ արդեն 2026/27 մրցաշրջանի եվրագավաթային արշավում թիմը հաղթահարեց առաջին փուլի արգելքը՝ երկու խաղում էլ հաղթելով Մալթայի «Մարսաշլոկին»:

«Փյունիկը» շնորհակալություն է հայտնել Արտակ Օսեյանին եւ նրա մարզչական շտաբին՝ ակումբում կատարած աշխատանքի, ներդրած էներգիայի եւ նվիրվածության համար:

Մինչ ակումբի պաշտոնական հայտարարությունը, «МЯЧ РУ» եւ «Еврофутбол» պարբերականների լրագրող Նորիկ Սերոբյանն իր տելեգրամյան «инсайдЯН» ալիքում բացահայտել էր մարզչի հեռացման իրական շարժառիթները՝ մեջբերելով «Փյունիկի» գլխավոր տնօրենի սպորտային հարցերով նորանշանակ խորհրդական Դմիտրի Սելյուկի խոսքերը:

Լրագրողի հետ զրույցում Սելյուկը բավականին կոշտ է արտահայտվել ակումբի ներքին կանոնների եւ մարզչի լիազորությունների վերաբերյալ.

«Մարդիկ, ովքեր չեն ցանկանում աշխատել մեր կանոններով, չեն աշխատելու ակումբում: Եթե Օսեյանը մեր կանոններով չաշխատի, ապա նա չի լինի «Փյունիկում»: Այստեղ ամեն ինչ որոշելու է ակումբը, հրահանգները գալու են վերեւից: Մարզիչը գալիս է, նա մարզում է, զարգացնում եւ անցկացնում մարզումային գործընթացը: Բայց երբ ինչ-որ մեկը պայմաններ է դնում կամ դիմում է շանտաժի, մենք դա չենք հանդուրժելու»,- նշել է Սելյուկը:

Աղբյուրը նաեւ հավելում է, որ Դմիտրի Սելյուկը Կազանի «Ռուբինի» իսպանացի գլխավոր մարզիչ Ֆրանկ Արտիգայի գործակալն է: Արտիգայի հնարավոր հեռացման մասին լուրերը շրջանառվում են դեռ նախորդ տարվանից, իսկ Սելյուկին, ըստ լրագրողի, անհրաժեշտ է մարզիչ, որի հետ նա կկարողանա կառավարել եւ վերահսկել ողջ գործընթացը:

Արտիգան կարող է դիտարկվել որպես «Փյունիկի» նոր գլխավոր մարզչի տարբերակներից մեկը, սակայն նշվում է, որ իսպանացի մասնագետը Կազանում շատ ավելի բարձր աշխատավարձ է ստանում, քան այս պահին կարող է առաջարկել երեւանյան ակումբը: Առաջիկայում սպասվում են նոր զարգացումներ «Փյունիկի» մարզչական ղեկի շուրջ:

ԸՆԴԳՐԿՎԵԼ Է

SofaScore հեղինակավոր վիճակագրական ռեսուրսը ներկայացրել է Սաուդյան Արաբիայի Պրո լիգայի 5-րդ տուրի խորհրդանշական հավաքականը, հայտնում է armsport-ը: Տուրն ավարտվել է շաբաթ օրը կայացած «Ալ-Իթիհադ» - «Ալ-Նասր» կենտրոնական դիմակայությունով:

Տուրի լավագույնների շարքում ընդգրկվել է նաեւ Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան, «Ալ-Աիլիի» փլեյմեյքեր Էդուարդ Սպերցյանը: Բացի հայ ֆուտբոլիստից, խորհրդանշական թիմում աչքի են ընկնում նաեւ «Ալ-Իթիհադի» հարձակվող Ջորջ Իլենիխենան եւ «Ալ Տաավունի» դարպասապահ Մայլսոնը:

Առաջնության մրցաշարային աղյուսակը միանձնյա գլխավորում է «Ալ Հիլալը»՝ օգտվելով կլասիկոյում «Ալ Նասրի» կրած պարտությունից:

Ինչ վերաբերում է Էդուարդ Սպերցյանի թիմին, ապա «Ալ Աիլին» երկու անընդմեջ անհաջողությունից հետո կարողացել է շտկել իրավիճակն ու 5-րդ տուրում վստահ հաղթանակ տոնել «Ալ Ռիադի» նկատմամբ: Ըստ SofaScore-ի գնահատականների՝ Սպերցյանն ու տուրի մյուս աստղերը առանցքային դեր են խաղացել իրենց թիմերի հաջողություններում:

Հավելենք, որ Սպերցյանն ընդգրկվել էր նաեւ Սաուդյան Արաբիայի Պրո լիգայի մեկնարկային տուրի խորհրդանշական հավաքականում:

ՀՍՏԱԿ ՈՒՂԵՐՁ

Ի՞ՆՉ ԾՐԱԳՐԵՐ ՈՒՆԻ «ԻՆՏԵՐ»-Ը ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԵՏ

«Ինտերի» գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուն սեպտեմբերի 4-ին՝ «Նապոլիի» դեմ Սերիա Ա-ի 3-րդ տուրի հանդիպման նախօրեին կայացած մամուլի ասուլիսում անդրադարձել էր նաեւ Հենրիխ Մխիթարյանին:

Ռումինացի մասնագետին հարցրել են թիմի նորեկների, մասնավորապես՝ անգլիացի ֆուտբոլիստների պատրաստվածության եւ նրանց՝ խաղադաշտ դուրս գալու ժամկետների մասին: Կիվուն նշել է, որ ինքը չի սիրում նախապես հստակ ծրագրեր կազմել եւ յուրաքանչյուր խաղում որոշումները կայացնում է իրավիճակից ելնելով, գրում է armsport-ը:

«Դուք հետաքրքրվում եք Սթոունզով եւ Ջոնսով, իսկ ես նույնքան հետաքրքրված եմ Կառլոս Աուգուստոյով եւ Մխիթարյանով՝ այն ֆուտբոլիստներով, որոնք տարիներ շարունակ եղել են այս խմբի հիմնարար անդամները եւ ամեն օր իրենց ներդրումն են ունենում թիմում»,- ասել է Կիվուն:

Կիվուի այս խոսքերը ցույց են տալիս, որ Մխիթարյանը շարունակում է մնալ «Ինտերի» մարզչական ծրագրերում: Հայ կիսապաշտպանը մրցաշրջանի մեկնարկային խաղերում դեռ խաղաժամանակ չի ստացել, սակայն նրա կարգավիճակը պետք չէ դիտարկել որպես թիմից դուրս մնալու կամ մարզչի վստահությունը կորցնելու նշան:

Ընդհակառակը՝ Կիվուն ընդգծել է, որ 25 ֆուտբոլիստներից բաղկացած երկար մրցաշրջանում բոլորը պետք է պատրաստ լինեն իրենց հնարավորությանը:

«Բոլորն իրենց հնարավորությունը կստանան, որովհետեւ մրցաշրջանը երկար է, եւ մեզ միշտ թարմ ուժ է անհրաժեշտ»,- ասել է «Ինտերի» գլխավոր մարզիչը:

Այս տրամաբանության շրջանակում Մխիթարյանի ներկայիս վիճակը կարելի է դիտարկել որպես ռոտացիոն կառավարման մաս: 37-ամյա հայ ֆուտբոլիստի փորձը կարող է հատկապես կարեւոր դառնալ այն փուլերում, երբ «Ինտերը» ստիպված կլինի միաժամանակ պայքարել Սերիա Ա-ում եւ Չեմպիոնների լիգայում:

Հատկանշական է նաեւ, որ «Նապոլիի» դեմ խաղից առաջ իտալական մամուլի հավանական կազմերում Մխիթարյանը նշվում էր պահեստայինների թվում: «La Gazzetta dello Sport»-ի հրապարակած նախնական կազմի համաձայն՝ նա հանդիպումը պետք է սկսեր պահեստայինների նստարանին:

Ի վերջո, Մխիթարյանը «Նապոլիի» դեմ խաղում խաղադաշտ դուրս չեկավ: «Ինտերը» հաղթեց 3:2 հաշվով:

Այսպիսով, Մխիթարյանի՝ մրցաշրջանի մեկնարկում խաղաժամանակ չստանալը, առնվազն այս պահին, ավելի ճիշտ է դիտարկել ոչ թե որպես նրա դերի նվազում, այլ որպես թիմի լայն ռոտացիայի եւ երկար մրցաշրջանի կառավարման գործընթաց:

Իսկ Կիվուի սեպտեմբերի 4-ի հայտարարությունը բավական հստակ ուղերձ է. Մխիթարյանը շարունակում է մնալ այն ֆուտբոլիստների շարքում, որոնցից «Ինտերը» ակնկալում է կարեւոր ներդրում մրցաշրջանի ընթացքում:

● Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 10-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Գայանե» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r դեռfերում է զորակոչիկին տարկետում տվում ընտանեկան պայմաններից ելնելով:

Գառնիկ Սիմոնյան, 67 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.

5) մինչեւ 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

2. Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա եւ որդեգրվել է խնամատար հաստատությունից, եւ առկա են «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 5-րդ կետերով նախատեսված պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից: Ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաեւ խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

Շարունակությունը՝ հաջորդ համարում

ՀՀ ՊՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞f «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայfարի մասին» ՀՀ օrենքի 6-rդ հոդվածի 5-rդ մասի համաձայն՝ ֆինանսական խմբի անդամները իրավունք չունեն տեղեկատվություն փոխանակել ԿԳՀ-ների վերաբերյալ:

Լուսինե Գաբրիելյան, 56 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինանսական խումբը պետք է ունենա եւ կիրառի փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված, ամբողջ խմբի համար կիրառելի ներքին իրավական ակտեր: Նույն հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ֆինանսական խումբը պետք է ունենա նաեւ ֆինանսական խմբի անդամների միջեւ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նմատակներով տեղեկատվության փոխանակման համար, ինչը ներառում է նաեւ ԿԳՀ-ին առնչվող ցանկացած տեղեկատվության փոխանակում: Վերը նշվածը բխում է ՖԱԹՖ 18-րդ եւ 21-րդ հանձնարարականներից, որոնք եւս սահմանում են ԿԳՀ-ներին առնչվող տեղեկատվության փոխանակումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով փոխանակվող տեղեկատվության ներքո եւ չի դիտում դա իբրեւ կասկածների բացահայտում: Այսպիսով, ֆինանսական խմբերը պարտավոր են իրենց անդամների միջեւ փոխանակել ինչպես ԿԳՀ-ներին առնչվող, այնպես էլ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակներից բխող ցանկացած այլ տեղեկատվություն:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ուժեղ քամու, անձրեւի, կարկուտի ու կայծակի հետեւանքով Ծաղկահովիտ խոշորացված համայնքի Գեղարոտ բնակավայրում ավերածություններ են տեղի ունեցել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 4 + 15 + 20
	Կոտայքի լեռներ	+ 1 + 4 + 16 + 19
	Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 + 21 + 24
	Գեղարքունիք	+ 4 + 7 + 12 + 16
	Լոռի	+ 1 + 5 + 18 + 22
	Տավուշ	+ 2 + 5 + 18 + 22
	Արագածոտնի լեռներ	0 + 4 + 15 + 19
	Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 13 + 22 + 26

	Արարատ	+ 10 + 13 + 24 + 27
	Արմավիր	+ 9 + 13 + 25 + 27
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 7 + 15 + 19
	Վայոց ձորի նախալեռներ	+ 10 + 14 + 25 + 29
	Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 10 + 14
	Սյունիքի նախալեռներ	+ 6 + 10 + 15 + 18
	Սյունիքի հովիտներ	+ 12 + 16 + 20 + 23
	Երեւան	+ 11 + 13 + 24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **07.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*